

ՍՎԱԶԼԻԱՆ Վ., Հայոց ցեղասպանությունը և ժողովրդի պատմական հիշողությունը, Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2003, 144 էջ:

Svazlian V., *The Armenian Genocide and the People's Historical Memory*. Yerevan, "Gitutjun" Publishing House of the NAS RA, 2004, 160 p., 2005, 140 p. *Le gnnocide armnien et la mnmoire historique du peuple*. Erevan, Ed. ,Guitoutiunt de l'Acadnmie Nationale des Sciences d'Armnne, 2005, 140 p. *Der Genozid an den Armenien und die historische Erinnerung des Volkes*. Jerewan, Verlag „Gitutjun“ der Nationalen Akademie der Wissenschaften der Republik Armenien, 2005, 140 S. *Ermeni soykırımı ve toplumsal hafıza*. İstanbul, "Belge" Uluslararası Yayıncılık, 2005, 160 s. *Свазлян В. Геноцид армян и историческая память народа*. Ереван, изд.-во "Титутюн" НАН РА, 2005, 140 с.

Տարեցտարի ավելի է մեծանում հետաքրքրությունը Հայոց ցեղասպանության նկատմամբ, որը պայմանավորված է վերջերս բազմաթիվ երկրների կողմից պատմական այդ փաստի ճանաչման իրողությամբ: Սակայն թուրք ու թուրքամետ պատմաբաններն առ այսօր ամեն կերպ ճգնում են խեղաթյուրել հայ ժողովրդի համար ճակատագրական դարձած 1915-1922 թթ. ստույգ իրողությունները:

Հայոց ցեղասպանության մասին տարբեր լեզուներով լույս են տեսել բազմաթիվ ուսումնասիրություններ, փաստաթղթերի ժողովածուներ, քաղաքագետների և հասարակական գործիչների ասույթներ, գեղարվեստական տարբեր ժանրերի ստեղծագործություններ: Սակայն հրատարակված այդ հսկայական գրականության մեջ բացակայել է ժողովրդի ձայնը՝ պատմական հիշյալ իրադարձություններից անմիջական տպավորություններ ստացած ականատես-վկա վերապրողների պատմածները, որոնք ևս պատմաճանաչողական, իրավաբանական, փաստավավերագրական և սկզբնաղբյուրային կարևոր արժեք են ներկայացնում:

Գիտակցելով հիշյալ իրադարձությունների բացահայտման գործում նաև ականատես-վերապրողների հաղորդած վկայությունների պատմաճանաչողական դերն ու նշանակությունը՝ Վ. Սվազլյանը, սկսած 1955 թ., Հայաստանի տարբեր շրջաններ, ինչպես նաև Հունաստան, Ֆրանսիա, ԱՄՆ և Թուրքիա կատարած իր անձնական կամ գիտաժողովային ուղևորությունների ընթացքում ականատես-վերապրողներից գրառել, ձայնագրել, տեսագրել և ուսումնասիրել է պատմական Հայաստանի, Կիլիկիայի և Անատոլիայի հայաբնակ 100 տեղավայրերի սեռատարիքային տարբեր խմբերի ներկայացուցիչների հաղորդած փաստավավերական ժողովրդական վկայություններ (660 միավոր), որոնցից յուրաքանչյուրն ապացուցողական արժեք ունի Հայ դատի արդարացի լուծման և Հայոց ցեղասպանության ճանաչման գործում:

Վ. Սվազլյանը Հայոց ցեղասպանության վերաբերյալ բազմաթիվ աշխատություններ է հրատարակել՝ գիտական շրջանառության մեջ դնելով

սկզբնաղբյուրային կարևորություն ունեցող ժողովրդական տարաբնույթ այդ նյութերը:

Հայոց ցեղասպանության 90-ամյա հիշատակի առիթով ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի և Հնագիտության և ազգագրության ինստիտուտի կողմից և ՀՀ կառավարության հովանավորությամբ Երևանում լույս է ընծայվել Վերժինե Սվազյանի «Հայոց ցեղասպանությունը և ժողովրդի պատմական հիշողությունը» խորագրով գիրքը հինգ լեզուներով՝ հայերեն, անգլերեն՝ երկու հրատարակությամբ (թարգմանիչ՝ Տիգրան Ծուլիկյան), ֆրանսերեն (թարգմանիչ՝ Աիդա Չարիսյան), գերմաներեն (թարգմանիչ՝ Լևոն Սարգսյան), ռուսերեն (թարգմանիչ՝ Գայանե Հարությունյան): Իսկ Ստամբուլում (Թուրքիա) “Belge” հրատարակչությունը, մարդու և ազգերի իրավունքների անկոտրում ու նվիրյալ պաշտպան, առաջադեմ թուրք մտավորական, քաղաքական գործիչ Ռաքիպ Զարաքուլուի խմբագրությամբ լույս է ընծայել նաև հիշյալ գրքի թուրքերեն տարբերակը: Աշխատությունը համալրված է անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, թուրքերեն, ռուսերեն և հայերեն ամփոփումներով, ականատես-վերապրողների լուսանկարներով և 1915-1922 թթ. Օսմանյան Թուրքիայում երիտթուրք կառավարության իրականացրած՝ արևմտահայերի տեղահանության և ցեղասպանության մասին գաղափար տվող գունավոր ուղեցույց քարտեզով:

Սույն ուսումնասիրության մեջ պատմական ստույգ փաստերը համադրված, մանրամասնված ու լրացված են ականատես վերապրողների հաղորդած վավերական վկայություններով՝ ներկայացնելով Հայոց ցեղասպանության ընդհանուր պատմական ընթացքը:

Վկայություններն արտացոլում են հայրենի բնաշխարհի գեղեցկությունը, հայերի նահապետական առօրյա կենցաղն ու սովորույթները, նրանց ապրած ժամանակաշրջանը՝ հասարակական-քաղաքական կյանքի պայմանները, նշանակալից պատմական իրադարձությունները, երիտթուրքական կառավարության պարագլուխների (Թալեաթ, Էնվեր, Զեմալ, Նազիմ, Բեհաեդդին Շաքիր) դաժանությունները (հարկահավաք, զորահավաք, զինահավաք, ողջակեզ, ջարդ, կոտորած), նրանց կազմակերպած բռնի տեղահանությունները դեպի ամայի անապատներ (Դեյր էլ Զոր, Ռաս ուլ Այն, Ռաքքա, Հոմս-Համա, Մեսքենե, Մուրոժ), հայերի կրած անասելի տառապանքները (ուժասպառվելու աստիճան քայլելը, ծարավը, քաղցը, համաճարակը, մահվան սարսափը), ինչպես նաև արևմտահայ տարբեր հատվածների արդար ու ազնիվ ոգորումներն ընդդեմ բռնության՝ պաշտպանելու համար իրենց ապրելու տարրական իրավունքը (1915 թ. Վանի հերոսամարտ, Շատախի, Շապին-Գարահիսարի, Սասունի գոյամարտեր, Մուսա լեռան, Ուրֆայի, ավելի ուշ՝ 1920-1921 թթ. Այնթապի, Հաճընի հերոսամարտեր), այդ ինքնապաշտպանական մարտերի ազգային հերոսներին (շապինգարահիսարցի Անդրանիկ Օզանյան, վանեցի Արմենակ Եկարյան, Մեծն Մուրադ [Համբարձում Բոյաջյան], մուսալեռցի Եսայի Յաղուբյան, ուրֆացի Մկրտիչ Յոթնեղբայրյան, այնթապցի Ադուր Լևոնյան, գեյթունցի Արամ Չոլաքյան, ազգային վրիժառու Սողոմոն Թեհլերյան) և բազմաթիվ այլ հայտնի ու անհայտ հայորդիներին, որոնք ժողովրդական զանգվածների հետ միասին պայքարել են, նահատակվել, նաև դիմակայել ու վերապրել:

Վ. Սվազյանն ուսումնասիրության «Ժողովրդական վկայությունների տիպաբանական առանձնահատկությունները» բաժնում նշում է, որ Հայոց

ցեղասպանությունը, որն իրագործվել է XX դարասկզբին, անմիջականորեն ընկալվել է ականատեսների զգայարաններով և անջնջելի կերպով տպավորվել է նրանց հիշողության մեջ: Նրանց պատմած հուշերը հազեցած են խոր պատմականությամբ, անմիջական են, ճշմարտացի, վավերական՝ ունեն հավաստի վկայությունների արժեք: Դրանք միաժամանակ և՛ եզակի են, և՛ համանման՝ միտվելով անձնականից ու առարկայականից դեպի համընդհանուրն ու համագգայինը: Հետևաբար, ականատեսների հուշերն իրենց ներքին բովանդակությամբ բնութագրում են ոչ միայն տվյալ անհատին ու նրա միջավայրը, այլև ողջ հավաքականությունը՝ դառնալով հայ ժողովրդի հավաքական պատմական հիշողությունը: Սակայն ժողովրդի պատմական հիշողությունն ունի նաև հարատևելու կարողություն, որը բերնեբերան անցնելով՝ շարունակում է հարատևել հետագա սերունդների հիշողության մեջ՝ արդեն պատմական գրույցների տեսքով:

Վ. Սվազյանը գրի է առել նաև Հայոց ցեղասպանության ականատես վերապրողների հաղորդած պատմական բնույթի բացառիկ երգեր (հայերեն և թուրքալեզու), որոնք գեղարվեստորեն վերարտադրում են տվյալ ժամանակաշրջանի հասարակական կյանքի բազմազան երևույթները՝ երիտթուրք կառավարության կազմակերպած զորահավաքն ու զինահավաքը, տեղահանությունն ու կոտորածները, ինչպես նաև հայերի ըմբոստության, իրենց ապրելու մարդկային տարրական իրավունքները պաշտպանելու, բռնությունները չհանդուրժելու, պայքարի և մաքառումի խրոխտ երգեր և այլ փաստացի, հուզիչ ու տպավորիչ դրվագներ:

«Հայոց ցեղասպանության ընթացքն ըստ ականատես վերապրողների վկայությունների» բաժնում հեղինակը, 1915-1922 թթ. պատմաքաղաքական իրադարձությունները ներկայացնելիս, որպես փաստավավերական սկզբնաղբյուրներ վկայակոչում է ականատես-վերապրողների հաղորդած վկայությունները: Պատմագիտական վերլուծությամբ հեղինակը կարևորում է դրանց բացառիկ դերը ոչ միայն իբրև անցյալի վկայություններ, այլև որպես ապագայի նախազգուշացում: Ցավոք, միջազգային հանրությունը ժամանակին չսաստեց և ըստ արժանվույն չդատապարտեց XX դ. դարասկզբին գործադրված առաջին՝ Հայոց ցեղասպանությունը, և, որպես հետևանք, ծնունդ առավ ֆաշիզմը՝ իր անկանխատեսելի դրսևորումներով և համաշխարհային աղետալի վտանգավորությամբ: Քանզի անպատիժ մնացած հանցագործությունները կրկնվում են ի վնաս մարդկության:

Ուսումնասիրությունն ավարտվում է հեղինակի հետևյալ եզրակացությամբ. «Ահա թե ինչու առանձնապես կարևորվում են Հայոց ցեղասպանության պատմական ողջ ընթացքի, անմեղ նահատակների ու կորցրած Երկրի մասին ականատես վերապրողների փաստավավերական, ժողովրդական վկայությունները սույն ուսումնասիրությամբ լույս աշխարհ հանելն ու գիտական շրջանառության մեջ դնելը, քանզի **ցեղասպանությունը ոճիր է**, որը բացահայտվելու է նաև վկաների օգնությամբ: Իսկ *ամենամեծ վկան ինքը՝ Ժողովուրդն է*, որը, ցավագործեն վերապրելով, պատմել ու դեռ շարունակում է պատմել՝ վկայելով իր ողբերգական անցյալը: Անցյալ, որը հայ ժողովրդի անցյալն է, նրա պատմությունը, նրա պատմական հավաքական հիշողությունը, որը պետք է ներկայացվի աշխարհին ու մարդկության արդար դատին: Ուստի ժամանակն է, որ ներկայիս Թուրքիայի

Հանրապետության կառավարությունը ևս քաջություն ունենա ընդունելու ինչպես գրավոր, նույնպես և բանավոր փաստերով հիմնավորված, ապացուցման կարիք չունեցող, պատմական այն բացահայտ ճշմարտությունը, որը կոչվում է Հայոց ցեղասպանություն» (էջ 135):

Ըստ հիշյալ գրքերի խմբագիր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ս. Հարությունյանի՝ «Հեղինակն առաջինն է գիտական շրջանառության մեջ դրել Հայոց ցեղասպանության շուրջ հյուսված հիշյալ նյութերը՝ հատկապես ժողովրդական հուշերն ու թուրքալեզու երգերը: ...Ականատեսների այդ հուշերը և մանավանդ թուրքալեզու երգերն ունեն պատմական վավերագրերի արժեք ոչ միայն հայ ժողովրդի ողբերգական այդ շրջանի պատմությունը ճիշտ հասկանալու և ըմբռնելու իմաստով, այլև Հայ Դատի պաշտպանությունն առավել հիմնավորելու և հատկապես թուրք ու թուրքամետ պատմաբաններին ժողովրդական հուշերով և հենց թուրքալեզու երգերով ու նրանցում հնչող մեղադրանքներով հակահարված տալու առումով» (էջ 5-6):

Այսպիսով, հայ ժողովրդի հավաքական պատմական հիշողության վերաբերյալ Վերժինե Սվազյանի ուսումնասիրության հայերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, ռուսերեն, թուրքերեն տարբերակներն իրենց փաստավավերական ու պատմաքաղաքական նշանակությամբ ծանրակշիռ նպաստ կբերեն Հայոց ցեղասպանության ճանաչման, դատապարտման ու Հայ դատի հետապնդման ջանքերին:

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Ա. Հ.

Պատմական գիտությունների թեկնածու